

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՆ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

Հոկտեմբերի 15-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) հիմնադրման 70-ամյակին:

Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը ներկաներին շնորհավորեց ակադեմիայի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ: Իր խոսքում նախագահն ասաց, «Վեհափա՛ն տեր,

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հարգելի անդամներ, Տիկնա՛յք և պարոնա՛յք,

Շնորհավորում եմ ձեզ ակադեմիայի հիմնադրման 70-րդ տարեդարձի կապակցությամբ: 1935 թվականին ՄՍՄՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի ստեղծմամբ իսկապես նոր և փայլուն էջ բացվեց հայոց գիտության զարգացման պատմության մեջ: Դա սկիզբն էր մեծ ճանապարհի, որով պիտի անցնեին տաղանդաշատ գիտնականների սերունդներ: Ոչ միայն անցնեին, այլ նաև փառքով պսակեին իրենց և իրենց ծնող ժողովրդի անունը:

Հայաստանի առաջավոր գիտությունը մեծապես նպաստել է մեր երկրի տնտեսական և սոցիալական զարգացմանը՝ Խորհրդային Հայաստանը դասելով հզոր գիտաարտադրական ներուժ ունեցող երկրների շարքին: Ակադեմիան ձևավորել է հասարակական և ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչ մտավորականների մի հսկայական բանակ, որն իր հերթին բարեփոխել է մի ողջ ժողովրդի հոգեկերտվածք:

Խորհրդային Միության փլուզումը և անցման շրջանը ծանր էր բոլորի, այդ թվում և մեր գիտական համակարգի համար: Ունեցանք անխուսափելի կորուստներ: Մա նույնպես փաստ է, որքան էլ ցավալի է խոստովանելը: Այսօր մեր կարևորագույն խնդիրն է արդիականացնել գիտության ենթակառուցվածքները: Ներկա աշխարհում առաջին հերթին հենց գիտության նվաճումների արդյունքում է, որ կտրուկ արագացել են բոլոր, նույնիսկ քաղաքական գործընթացները: Մա նշանակում է, որ մենք չպետք է դանդաղենք գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումների անցկացման ճանապարհին:

Խիստ կարևոր եմ համարում, որ բարեփոխումներն իսկապես լինեն բարեփոխումներ նաև գիտաշխատողների սոցիալական խնդիրների լուծման առումով: Մենք պետք է կարողանանք թույլ չտալ, որ ոլորտի փոփոխություններն ու արդիականացումը հանգեցնեն գիտաշխատողների սոցիալական վիճակի վատթարացմանը: Ճիշտ հակառակը: Համոզված եմ, որ մեր հասարակության մեջ պետք է վերականգնվի ոչ միայն գիտնականի սո-

ցիալական բարձր կարգավիճակը, այլև նրա բարի համբավն ու բարձր հեղինակությունը: Մա պարտադիր պայման է աճող սերնդի խրախուսման հարցում: Մեր երեխաները պետք է ցանկություն ունենան դառնալու գիտնական:

Հարգելի ներկաներ,

Բնական է, որ ժամանակն իր հետ նոր հնարավորություններ է բերում: Ես խոսում եմ միջազգային գիտական համագործակցության մեծացող հնարավորությունների մասին: Նույնիսկ աշխարհի ամենահարուստ երկրների գիտությունը անհնար է պատկերացնել առանց միջազգային համագործակցության: Ներկա աշխարհում դա պարզապես անհնար է: Մենք առավել ևս պետք է շահագրգիռ լինենք և կտրուկ ընդլայնենք մեր գիտական միջազգային համագործակցությունը: Եթե մենք հպարտորեն արձանագրում ենք, որ խորհրդային համագործակցության համատեքստում կարողացել ենք լուրջ նվաճումներ արձանագրել, ապա նույնը պետք է փորձենք անել արդեն ներկայիս բազմակողմանի համագործակցության համատեքստում:

Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման հեռանկարներն իմ կարծիքով հենց այդ համագործակցության ծիրում են: Այլ հեռանկար մենք չունենք: Բայց ասվածը չի նշանակում, թե իբր մեր գիտական հանրությունը չունի կամ չի կարող ունենալ ներքին պատվիրատու: Այս իմաստով ես կարևոր եմ համարում ակադեմիայի գիտական կառույցների և անհատ գիտնականների համագործակցությունը տնտեսության և մասնավորապես արտադրության ներկայացուցիչների հետ:

Միրելի գիտնականներ,

Կրկին շնորհավորում եմ ձեզ այս մեծ հոբելյանի առթիվ: 70 տարում ձեր նախորդները և դուք կատարել եք անհավանական մեծ աշխատանք, որ, իմ խորին համոզմամբ, պետք է կոչել գիտական սիրանք: Մտադրում եմ ձեզ, որ դուք արժանիորեն շարունակեք գիտությունների ազգային ակադեմիայի փառավոր ավանդույթները, հարստացնեք դրանք ձեր նոր ձեռքբերումներով ու փորձով, պատրաստեք և ձևավորեք հայ գիտնականների նոր սերունդներ՝ ի փառս մեր երկրի և Հայաստանի գիտության:

Շնորհակալություն»:

Մերժ Սարգսյանը գիտության ու կրթության բնագավառում ունեցած մեծ վաստակի և ակնառու ծառայությունների համար ՀՀ ԳԱԱ մի խումբ անդամների պարգևատրեց ՀՀ պետական բարձր պարգևներով՝ շքանշանով, մեդալներով, շնորհեց նաև պատվավոր կոչումներ (տե՛ս էջ 306):

Միջոցառմանը հայրապետական օրհնությունը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք և Ամենայն հայոց կաթողիկոսը. «Գիտությունների ազգային ակադեմիան մեր ժողովրդի մեծ ձեռքբերումներից է և արդար հպարտության առարկան: Այս զգացումով ենք հավաքվել այստեղ: Այսօր առանձնակի զոհունակությամբ ենք անդրադարձնում անցած ուղուն, ձեռքբերումներին: Ազգային ակադեմիան վկայում է գիտության նկատմամբ սերն ու նվիրումը, որն ուղեկցել է մեր ժողովրդին:

Հայաստանը դարձավ մեծ գիտության երկիր և արդարացրեց բոլոր սպասելիքները: Կարճ ժամանակում հայ գիտնականներն իրենց խոսքն ա-

սացին, իրենց ավանդը բերեցին երկրի առաջընթացում: Ձեզանից շատերը մասնակիցն են այդ մեծ ճանապարհի»:

Այնուհետև զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան բոլորեց գոյության յոթերորդ տասնամյակը: Յոթանասուներեք տարիների ընթացքում հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնը դժվարին, սակայն բովանդակաշատ ուղի է անցել, վիթխարի գիտական նվաճումներ ձեռք բերել, արժանացել համաշխարհային ճանաչման:

Հայ ժողովուրդը դարեր ի վեր առանձնահատուկ հոգածություն ու ակնածանք է տածել գիտության և մշակույթի հանդեպ, որոնք դարձել են ոչ միայն նրա առաջընթացի գրավականը, այլև գոյապահպանման գորեղ միջոցը:

Հայաստանի առաջին հանրապետությունը գոյության երկուսուկես տարվա ընթացքում հնարավորություն չունեցավ և չհասցրեց զբաղվել ակադեմիա հիմնելու խնդրով, հազիվ կարողացավ համալսարան բացել:

Խորհրդայնացման առաջին տարիներին Էջմիածնում, սպա Երևանում հիմնվում են գիտական օջախներ, սակայն գիտության ավանգարդը մինչև 1930-ական թվականների կեսերը, այնուամենայնիվ, մնում էր Երևանի պետական համալսարանը, որտեղ գիտակրթական գործունեություն էին ծավալում գլխավորապես ավագ սերնդի անվանի գիտնականները: 1935 թ. Երևանում բացվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆան), որը ղեկավարում էր Հայաստանում ուսումնասիրություններ կատարած անվանի երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսսինգը:

1938 թ. Արմֆանի նախագահ ընտրվեց տաղանդաշատ արևելագետ, հայագետ ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին: ՄՍՄԿ ԳԱ հայկական մասնաճյուղը հայագիտական ուսումնասիրություններից զատ զբաղվում էր ֆիզիկամաթեմատիկական, երկրաբանական, տեխնիկական, բնական և գիտության այլ ճյուղերով:

Երբ դեռևս մոլեզմում էր Հայրենական մեծ պատերազմը, ՀԽՍՀ կառավարության որոշմամբ 1943 թ. նոյեմբերին հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ակադեմիայի հիմնադիր կազմում ընդգրկվեց գիտության տարբեր բնագավառների 23 անվանի գիտնական, իսկ գիտության նորաստեղծ կաճառի պրեզիդենտ է ընտրվում ակադեմիկոս Հ. Օրբելին: Սկսվեց ակադեմիայի ձևավորման գործընթացը: Հ. Օրբելին միաժամանակ աշխարհահռչակ թանգարան Էրմիտաժի տնօրենն էր և 1947 թ. ազատվեց պրեզիդենտի պաշտոնից, վերադարձավ Պետերբուրգ՝ զբաղվելու թանգարանագիտությամբ:

Ակադեմիայի պրեզիդենտ ընտրվեց դեռևս չորրորդ տասնամյակը չբոլորած, սակայն համաշխարհային ճանաչման արժանացած, կազմակերպչական մեծ ունակությունների տեր Վիկտոր Համազասպի Համբարձումյանը: Այս ընտրությունը Հայաստանում գիտության զարգացման համար ունեցավ վճռորոշ նշանակություն, ՀԳԱ-ն թևակոխեց զարգացման նոր փուլ:

Ակադեմիայի հիմնադրման պահին հասարակական գիտությունները ներկայացված էին Պատմության, Լեզվի և Գրականության ինստիտուտներով: Հայագիտության բոլոր ճյուղերով և պատմական բոլոր դարաշրջաններով մասնագիտական լայնածավալ ուսումնասիրություններ կատարելուն նպաստելու նպատակով ստեղծվեցին Արվեստի, Արևելագիտության, Տնտեսագիտության, Փիլիսոփայության և իրավունքի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները: Հայաստանը, իրավամբ, դարձավ հայագիտության էպիկենտրոն:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի 46-ամյա ղեկավարման ժամանակահատվածում Հայաստանի գիտությունների ակադեմիան կայացավ, ունեցավ ծանրակշիռ ձեռքբերումներ, առաջատար դեր ստանձնեց Խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների շարքում, ճանաչելի դարձավ արտասահմանում: ՀԳԱ-ի պրեզիդենտն ընտրվեց գիտական կազմակերպությունների համաշխարհային խորհրդի նախագահ, իսկ գիտական, գիտակազմակերպական և հասարակական փայլուն գործունեության համար Վ. Համբարձումյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի կոչում:

Հայ ազգն ունեցել է աշխարհահռչակ ու աշխարհաճանաչ շատ զավակներ, որոնք համաշխարհային պատմության մասն են եղել: Ունեցել ենք պետական ու զինվորական գործիչներ, արվեստի ու գրականության մշակներ, ազգային ոգու ու հավատքի պահապաններ: Եղել են նաև գիտության անխոնջ նվիրյալներ, ինչպիսիք էին Մեսրոպ Մաշտոցը, Դավիթ Անհաղթը, Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին: XX դարում գիտական այրերի հաղթարշավի դրոշակակիրը մեծատաղանդ Վիկտոր Համբարձումյանն էր, որի հռչակը համաշխարհային հանրությանը ճանաչելի է դարձնում նրան ծնած ժողովրդին: Նրա գիտական բացահայտումները էսպես փոխեցին պատկերացումները մեզ շրջապատող տիեզերքի և այնտեղ տեղի ունեցող ֆիզիկական գործընթացների, տիեզերական մարմինների առաջացման ու դրանց զարգացման առանձնահատկությունների մասին:

Մի քանի տարի առաջ ՀՀ նախագահի նախաձեռնությամբ կյանքի կոչվեց կարևոր մի իրադարձություն ևս. սահմանվեց Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ, որը յուրաքանչյուր երկու տարին մեկ շնորհվում է աստղաֆիզիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում գիտական նշանակալի ձեռքբերումներ ունեցած ականավոր գիտնականներին: Մրցանակաբաշխության նպատակն է հավերժացնել Վ. Համբարձումյանի հիշատակը, աշխարհին ներկայացնել Հայաստանի գիտությունը և նպաստել մեզանում աստղաֆիզիկայի զարգացմանը:

1993 թ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ է ընտրվում ճանաչված պետական գործիչ, գիտության և գիտական արտադրության անվանի կազմակերպիչ Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: Նախագահի պաշտոնը նա ստանձնեց բարդ՝ Հայաստանի երրորդ հանրապետության կազմավորման դժվարին ժամանակաշրջանում: 1991 թ. Խորհրդային Միության փլուզումը ծայրահեղ ծանր իրավիճակ ստեղծեց ինչպես տնտեսության, այնպես էլ գիտության ու մշակույթի բնագավառներում: Սկսվեց տնտեսության անկումը, խզվեցին միջպետական սերտ

կապերը, դադարեց ԽՍՀՄ հանրապետությունների ակադեմիաների համագործակցությունը: Համընդհանուր քառսի պայմաններում առավել խառնակ ու օրհասական էր իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում՝ դարաբաղյան պատերազմի, շրջափակման, ավերիչ երկրաշարժի պատճառով:

Տնտեսական վերափոխումներին զուգահեռ հույժ կարևոր էր հոգաձույթունը գիտության հանդեպ՝ պահպանել գիտական հիմնական ուղղությունները, գիտական ներուժը, նախկին գիտական կապերն ու համագործակցությունը:

Որոշակի առաջընթաց դիտվեց բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ գիտաուսումնական գործընթացը բարելավելու, համատեղ ծրագրեր մշակելու ուղղությամբ: Տարբեր աղբյուրներից ստացվող միջոցներով հնարավոր դարձավ հիմնականում պահպանել գիտական ներուժը, գիտական հետազոտությունների բարձր մակարդակը: Բացվեցին գիտական նոր հաստատություններ, ինչպես Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Էկոլոգանոսֆերային հետազոտությունների, Մանրէների ավանդադրման, Մոլեկուլի կառույցի ուսումնասիրման գիտական կենտրոնները:

2006 թ. ՀՀ ԳԱԱ նախագահ ընտրվեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:

Գիտությունների ակադեմիայի առաջ ծառայել էին դժվարությամբ ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու, խորացնելու, գիտության զարգացման արդի մարտահրավերների ոգով ձեռնարկումներ կատարելու հիմնահարցերը: Նշված դժվարին ու բարդ խնդիրների լուծումը պահանջում էր գիտության բնագավառում իրականացնել բազմակողմանի վերափոխումներ, որոնք կնպաստեին գիտության զարգացմանը:

Արդյո՞ք բարեփոխումների իրականացումը գիտության առաջընթացին նպաստող անհրաժեշտություն էր, թե երկրում ընթացող բարեփոխումների շարքի միջոցառում: Այդ պատճառով անդրադառնանք գիտության ոլորտում առկա օբյեկտիվ իրողություններին:

– Նախորդ 60 տարիների ընթացքում ԳԱԱ-ն եղել է վիթխարի ԽՍՀՄ-ի հզոր գիտական համակարգի մի մասը, ինչով էլ պայմանավորված էր գիտական ու գիտատեխնիկական մեծաքանակ կազմակերպությունների առկայությունը երկրում:

– Անցումային շրջանում գիտության անընդհատ թերֆինանսավորումը բացասաբար է ազդում նրա վերելքի վրա: Մասնագետների ուսումնասիրությունները վկայում են, որ եթե գիտության ֆինանսավորման չափը փոքր է ՀՆԱ-ի 1%-ից, ապա տվյալ երկրի գիտությունը չի կարող դրական ազդեցություն ունենալ նրա տնտեսության զարգացման վրա, իսկ ինքը՝ գիտությունը, աստիճանաբար կմահանա:

– Կադրերի թվաքանակը էական ու կտրուկ կրճատվեց: Եթե 1990 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ համակարգում աշխատում էր 7500 մարդ, ապա առ 01.01.2007 թ. այն կիսով չափ նվազեց՝ 3750, որոնցից միայն 2200 էին գիտաշխատող:

– Գիտական ինֆրակառուցվածքը ֆիզիկապես և բարոյապես մաշվել էր: Անկախության շրջանում համակարգի կառույցները հնարավորություն չեն ունեցել ժամանակակից սարքավորումներ ձեռք բերել: Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր գիտության ասպարեզում ներդնել վարկային համակարգ:

Հասարակության մեջ գիտական աշխատանքը և գիտաշխատողը ծայրահեղ ցածր վարկանիշ ունեին:

– Կառավարման համակարգն անհրաժեշտ էր դեմոկրատացնել՝ վերադաս մարմինների ընտրություններին մասնակից դարձնելով նաև գիտաշխատողներին:

Ընդհանուր առմամբ, գիտությունը հանդիպել է մեծ դժվարությունների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ էին վերափոխումներ՝ ոչ թե նոր դժվարություններ հարուցող, այլ նրա զարգացմանը նպաստող: Բոլոր դեպքերում, ԳԱԱ համակարգի գիտաշխատողները, այնուամենայնիվ, անկախության տարիներին և նույնիսկ վերջին 5–6 տարիների ընթացքում գիտության տարբեր բնագավառներում ունեցել են լուրջ գիտական արդյունքներ, որոնք ճանաչվել են համաշխարհային գիտական հանրության կողմից:

Մակայն ոչ բոլոր կազմակերպություններում են տարվում նմանատիպ աշխատանքներ, ոչ բոլոր հետազոտություններն են արդիական: Մտահոգիչ են գիտական արդյունքները տնտեսության տարբեր ճյուղերում ներդնելու, գիտության տարբեր ճյուղերը երիտասարդ կադրերով համալրելու հարցերը և, վերջապես, բարոյապես և ֆիզիկապես մաշված սարքավորումներն արդիականացնելու անհրաժեշտությունը:

2006 թ. սկսված բարեփոխումների գործընթացն առաջին հերթին պետք է նպաստեր գիտության զարգացմանը: Անհրաժեշտ էր ունեցած մարդկային, նյութական և մնացյալ ռեսուրսները կենտրոնացնել գիտական այն ուղղությունների շուրջը, որոնք ունեին ավանդույթներ, ապահովված էին կադրերով և ուրվագծված էին մոտ ապագայում կատարվելիք աշխատանքները: Այս առումով կարևորվում էր գիտության գերակա ուղղությունների հաստատումը, որոնք պետք է դառնային պարտադիր բոլոր գիտատեխնիկական կառույցների համար: Գերակա ուղղությունները պետք է լինեին իրատեսական և ապահովված անհրաժեշտ գիտատեխնիկական ներուժով, բարձր որակավորմամբ մասնագետներ պատրաստելու գիտակրթական համակարգով: Միաժամանակ, կարևորագույն ուղղությունների ընտրության հարցում, ինչպես, օրինակ, հայագիտության դեպքում, անհրաժեշտ էր հաշվի առնել Հայաստանի Հանրապետությանը վերապահված դերակատարումը՝ որպես աշխարհում գիտության այդ ուղղության լիարժեք զարգացման եզակի ու հիմնական օջախի:

Գերակա ուղղությունները, ի մի բերելով գիտական և գիտատեխնիկական առկա ներուժը, կոչված են երկրում մրցունակ գիտատար արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար, ինչպես նաև պետք է նպաստեին մարդկանց առողջության բարելավմանն ու շրջակա միջավայրի աղտոտվածությանն ուղղված միջոցառումների մշակմանը:

Բարեփոխումների գործընթացի կարևոր մասը համակարգի օպտիմալացումն է, որի նպատակը մանր, ոչ արդյունավետ գործող փոքր ստորաբաժանումներից ազատվելն է, որոնք ժամանակին ստեղծվել էին ոչ այնքան գիտական խիստ անհրաժեշտությունից դրդված, որքան նեղ անձնական շահագրգռվածությամբ: Արդյունքում, նախկինում առանձին-առանձին գործող 18 գիտական կազմակերպությունների հենքի վրա կազմակերպվեցին երեք գիտական կենտրոն և երեք ինստիտուտ ընդլայնված ուղղություններով:

Հասարակության զարգացման գործընթացներում գիտության, որպես առաջընթացի հիմնական գործոնի դերը բարձրացնելու նպատակով պետք է վերանայվեն գիտական կազմակերպությունների, պետության և հասարակության փոխհարաբերությունները: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ոչ միայն գիտության վարկի խիստ անկում է նկատվում, այլև հանրային գիտակցության մեջ համատրոեն ներդրվում է այն տեսակետը, թե Հայաստանում գիտության ծավալները չափից ավելի մեծ են, որ պետությունն ի գործու չէ պահել և զարգացնել այն:

Պետական ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գոյության իրավական հիմքերը, կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները մինչև վերջերս կարգավորվում էին 2000 թ. դեկտեմբերին ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի ԳԱԱ-ն Հայաստանի Հանրապետության գիտական բարձրագույն կենտրոնն է, ունի ՀՀ գիտական քաղաքականության մշակման, իրականացման և գիտության կառավարման հատուկ կարգավիճակ և պետության հետ հարաբերություններում անմիջականորեն առնչվում է ՀՀ վարչապետի հետ:

Մակայն ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների իրավական կարգավիճակը, նորարարական ու գիտական արդյունքների առևտրայնացման հետ կապված արդիական պահանջների իրականացումը հակասության մեջ էին հայտնվել ավելի ուշ ընդունված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» (ընդունվել է 23.10.2001 թ., ՀՀ ԱԺ-ի կողմից) ՀՀ օրենքի որոշ դրույթների, ինչպես նաև այլ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ:

Այս հակասությունները վերացնելու, ԳԱԱ գիտատեխնիկական ներուժը հիմնարար գիտական արդյունքների, դրանց հիման վրա կիրառական մշակումների ներդրման բնագավառում առավել նպատակասլաց օգտագործելու համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ մշակվեց «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ԱԺ-ն հաստատեց 14.04.2011 թ.: Օրենքի կարևոր դրույթներից է ԳԱԱ համակարգի կազմակերպությունների համար ԳԱԱ-ի՝ որպես պետական լիազորված մարմնի դերի մասին դրույթը, որը հստակեցնում է համակարգի կառավարումը:

Գիտության ոլորտի առջև ծառայած առաջնահերթ խնդիրներից է գիտական կադրերի երիտասարդացման հարցը: Չնայած պետական տարբեր մակարդակներում ընդունված որոշումներին ու ծրագրերին՝ երիտասարդ կադրերի համար գիտությունը, այնուամենայնիվ, մնում է պակաս գրա-

վիչ, շարունակվում է երիտասարդ կադրերի արտահոսքը գիտությունից այլ ոլորտներ, նաև արտերկիր: ԳԱԱ բաժանմունքների և ինստիտուտների գործունեության հիմնական ուղղություններից մեկը երիտասարդ կադրերով հետազոտական աշխատանքների ապահովվածությունն է: Վերականգնվել է ԳԱԱ երիտասարդ մասնագետների խորհուրդը, որն ակտիվ գործունեությամբ հասել է որոշակի հաջողությունների: Երիտասարդ գիտնականների մասնակցությամբ անց են կացվել բազմաթիվ գիտաժողովներ, հանդիպումներ, այլ միջոցառումներ և՛ Հայաստանում, և՛ արտերկրում: Լուծվել է երիտասարդ գիտնականներին բնակարաններով ապահովելու հարցը, թեկուզ և մասնակի:

Համակարգի հիմնական կադրային պոտենցիալը ձևավորվում է բուհերի շրջանավարտների հաշվին: Ակադեմիան, որպես բարձր որակավորմամբ մասնագետներ ունենալ ձգտող շահագրգիռ կողմ, ակտիվ համագործակցում է հանրապետության առաջատար բուհերի հետ: Կատարվում են համատեղ գիտական հետազոտություններ, որոնք իրականացվում են համատեղ ստեղծված գիտական և ուսումնական կառույցների օգնությամբ:

Գիտության և կրթության ինտեգրման ոլորտում նոր ենթակառուցվածքների ձևավորումը դարձել է անհրաժեշտություն՝ կապված տնտեսական համակարգի ձևավորման, գիտության և տեխնիկայի բնագավառում պետության դերի բարձրացման և բարձրագույն կրթության վերակառուցման հետ:

ԳԱԱ համակարգում իրականացվող միջոցառումների արդյունքում առ 01.01.2013 թ. երիտասարդ գիտաշխատողների թիվը կազմում է ընդհանուր թվաքանակի 29%-ը:

Վերջին տարիներին էապես բարելավվել է միջազգային գիտակրթական կենտրոնի գործունեությունը: Կենտրոնը, որպես կրթական հաստատություն, բարձր վարկանիշ ունի ոչ միայն հանրապետությունում, այլև ողջ տարածաշրջանում, որտեղ ուսանել են կամենում դիմորդներ տարածաշրջանի երկրներից: Մեծ է տարբեր մասնագիտություններով ասպիրանտուրա ընդունվել ցանկացողների թիվը: Մագիստրոսական ուսուցումն իրականացվում է համապատասխան մասնագիտությամբ հետազոտական ինստիտուտներում, ինչը այն ավելի հետաքրքիր և բովանդակալից է դարձնում, քան բուհական ուսուցումը: Վերջին երկու-երեք տարում ավելացել են մասնագիտությունները, մշակվել են ուսումնական նոր ծրագրեր: Առ 01.01.2013 թ. կենտրոնի ուսանողների թիվը 1100 է: Կենտրոնի՝ թեմատիկ և բազային ֆինանսավորմամբ գիտական հետազոտությունների արդյունքները տպագրվում են հեղինակավոր միջազգային ամսագրերում: Այն իր ուսումնական և գիտական ծրագրերով կարող է դառնալ հետազոտական համալսարան:

Համաշխարհային ընկերակցության զարգացման նոր միտումները կապվում են տարբեր երկրների միջև համագործակցության ընդլայնման հետ և ուղղված են մարդկության առջև ծառայած գլոբալ խնդիրների լուծմանը, շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի մակարդակի և ֆիզիկական առողջության պահպանմանը: Կատարվում է գիտնականների և ճարտարագետների ջանքերի համադրում՝ էներգիայի նոր աղբյուրների

բացահայտման և շահագործման, տիեզերական տարածության յուրացման, ընդհանուր տեղեկատվական դաշտի ստեղծման ուղղությամբ: Գիտության զարգացման նոր ռազմավարությունն առաջնությունը տալիս է այնպիսի հետազոտություններին, որոնք արժևորում են համաշխարհային ընկերակցության գոյությունը, նրա կայուն և անվտանգ զարգացման հեռանկարը:

ՀՀ ԳԱԱ միջազգային գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու ակադեմիայի գիտնականների առավել ակտիվ մասնակցությանը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: Վերջին 5-6 տարիների ընթացքում մեծապես ակտիվացել է ակադեմիայի միջազգային համագործակցությունը: Համագործակցության նոր պայմանագրեր են ստորագրվել Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ուկրաինայի, Լիտվայի, Ռումինիայի, Հունգարիայի գիտությունների ակադեմիաների հետ, պայմանագրեր են կնքվել Ֆրանսիայի CNRS կենտրոնի, Գերմանիայի Մաքս Պլանկ ընկերության հետ: Երկարատև համագործակցության արդյունքում համատեղ գիտական լաբորատորիաներ են ստեղծվել Ֆիզիկական հետազոտությունների, Երկրաբանական, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների հետ: 2012 թ. ՀՀ ԳԱԱ ինստիտուտներն իրականացրել են 81 դրամաշնորհային ծրագիր: Դրամաշնորհները ոչ միայն բարելավում են կառույցի ֆինանսական վիճակը, այլև անմիջական կապ հաստատում գիտնականների միջև, նպաստում մեր գիտության՝ համաշխարհային գիտական գործընթացներին ինտեգրմանը:

Խիստ կարևորելով մայր հայրենիքի և սփյուռքահայ գիտնականների հզոր ներուժի համախմբումը, հայ գիտական միտքը Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտության և տնտեսության զարգացմանն ուղղորդելը, դրանով իսկ խթանելով հայ գիտնականների համագործակցությունն ամբողջ աշխարհում՝ ԳԱԱ նախագահության առաջարկով 2007 թ. հոկտեմբերի 31-ին որոշում ընդունվեց՝ ստեղծել ԳԱԱ սփյուռքի բաժին, որը պետք է իրականացնէր սփյուռքահայ գիտնականներին ԳԱԱ արտասահմանյան անդամներ ընտրելու կազմակերպական և ապագա համագործակցության աշխատանքներ վարելու գործընթացը: Սփյուռքի բաժինը կոորդինացնում և անմիջական կապ է հաստատում ԳԱԱ նախագահության և ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամների, համակարգի ինստիտուտների և առանձին գիտաշխատողների միջև, հետևում է բոլոր պայմանավորվածությունների կատարմանը:

2008 թ. և 2010 թ. ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ են ընտրվել 115 հայազգի հանրահայտ գիտնականներ աշխարհի 23 երկրներից: Սփյուռքահայ գիտնականների հետ մեր գիտնականների համագործակցությունը բազմազան է ու բազմաբնույթ: Նրանց օգնությամբ իրականացվում է երիտասարդ գիտական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, մեր գիտնականների մասնակցությունը միջազգային գիտակրթական ծրագրերին, կատարվում են համատեղ գիտական հետազոտություններ, արդյունքները տպագրվում են հեղինակավոր միջազգային գիտական հանդեսներում:

Նախագահության կազմում ստեղծվել է միջազգային դրամաշնորհների և ծրագրերի բաժին, որը համակարգում և տեղեկատվություն է տարածում, աշխատանքներ է տանում մեր հետազոտողներին եվրոպական ծրագրերում ներառելու համար, դրամաշնորհների մասին համապատասխան հայտեր կազմում:

Հրատարակչական գործունեությունն ակադեմիայի կարևոր գործառույթներից է: Այն ներառում է հրատարակչական խորհրդի, գիտական պարբերականների հրատարակումը և տպարանի գործունեությունը: 2006 թ. հրատարակչական ոլորտում կատարվել են կառուցվածքային լուրջ փոփոխություններ: Ընդհանուր գործընթացը բարելավելու նպատակով առանձին-առանձին գործող, տարանջատված հրատարակչությունը, տպարանը և ակադեմիական հանդեսները միավորվեցին մեկ ընդհանուր կառույցում: Նախագահության որոշմամբ ստեղծվեց նոր խորհուրդ, մշակվեցին միջոցառումներ՝ նպատակաուղղված ակադեմիական գրքերի, հանդեսների կանոնակարգված հրատարակությանը, ինչի արդյունքում հրատարակչական գործունեությունը դարձավ առավել կազմակերպված և արդյունավետ:

Ընդհանուր առմամբ, ակադեմիայի հրատարակչությունը, օգտագործելով տեղեկատվական և տեխնոլոգիական ժամանակակից միտումները, էապես ակտիվացրել է գործառույթներն այդ բնագավառում:

Հայաստանի Հանրապետության գիտության համակարգում կարևորագույն դերակատարություն ունի ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան՝ որպես համակարգող մարմին և կառավարության խորհրդատու:

Իր գոյության 70 տարիների ընթացքում ակադեմիան կուտակել է գիտագործնական հսկայական փորձ, արժանացել է միջազգային գիտական հանրության բարձր գնահատականին, վայելում է հարգանք և հեղինակություն: Ակադեմիայի համակարգում ձևավորվել են բազմաթիվ գիտական դպրոցներ, որոնք միշտ էլ պատվով են ներկայացրել Հայաստանը միջազգային ասպարեզում: Ակադեմիայի համակարգի բազմաթիվ գիտական կազմակերպություններ մշտապես գիտական իրենց ձեռքբերումներն անհատույց ծանայեցրել են պետությանն ու ժողովրդին:

Հատկապես մեծ է ակադեմիայի համակարգող դերը հայագիտության, հասարակական այլ, հիմնարար ու կիրառական, բնական գիտությունների բնագավառներում»:

Այսօր էլ ակադեմիան իր կազմակերպություններով հանդերձ, գիտական մեծ ուժ է, ճիշտ կազմակերպման և օգտագործման դեպքում այն կարող է էապես նպաստել Հայաստանի Հանրապետության կայուն զարգացմանը պետության և հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառներում:

ՀՀ ԳԱԱ 70-ամյակի տոնակատարությանը մասնակից պատվիրակությունների անունից ակադեմիայի հորեյանը ջերմորեն շնորհավորեցին Եվրոպական ակադեմիական միության փոխնախագահ, Հոլանդիայի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, պրոֆեսոր Էդ Նոտտը և Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վլադիմիր Ֆորտովը:

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում կայացած հորեյանական երեկոն ավարտվեց փոքրիկ և հետաքրքիր համերգով:

Նշանակալի էր, որ դիրիժորական վահանակի մոտ էր Խորհրդային Միության ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր մաեստրո Հովհաննես Չեքիջյանը: Եվ նրա ղեկավարությամբ Հայաստանի պետական երգչախումբը առաջին անգամ կատարեց Հայաստանի գիտությունների ակադեմիային նվիրված, հորեյանի առիթով գրված հրաշալի հիմներ: Եվ թո՛ղ այդ խրոխտ հիմներ միշտ ուղեկցի հայ գիտության փառապանծ կաճառին:

* * *

Հոկտեմբերի 15-ին Գիտությունների ազգային ակադեմիան այցելուների և հյուրերի պակաս չունեք: Այստեղ էին ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Եվրոպական միության, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ռումինիայի, Բելառուսի գիտությունների ակադեմիաների պատվիրակությունները:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի հետ հանդիպումից հետո ՀՀ ԳԱԱ նախագահությունների ձեռնարհում տեղի ունեցավ հորեյանական ցուցահանդեսի բացումը: Ցուցահանդեսի շրջանակներում առանձին տաղավարների տեսքով ներկայացված էին ակադեմիայի ինստիտուտների, բաժինների աշխատություններն ու նորարարությունները:

Այնուհետև նիստերի դահլիճում կայացավ ԳԱԱ աշխատակիցների պարզների հանձնման արարողությունը: Ակադեմիայի մի խումբ աշխատակիցներ պարզևատրվեցին ՀՀ ԱԺ հուշամեդալներով, պատվոգրերով, ՀՀ կառավարության ոսկե մեդալներով, կառավարության պատվոգրերով, ՀՀ պաշտպանության նախարարության մեդալներով ու պատվոգրերով և ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալներով, պատվոգրերով:

Վարչապետ Տիգրան Մարգարյանն էլ ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի ուղեկցությամբ շրջեց ակադեմիայի տարբեր ինստիտուտների ձեռքբերումների ու գիտական նորարարությունների ցուցահանդեսի տաղավարներում, ծանոթացավ ներկայացված նյութերին:

Շնորհավորելով ՀՀ ԳԱԱ-ին 70-ամյակի կապակցությամբ՝ վարչապետը կարևորեց երիտասարդների ներգրավումը գիտահետազոտական ինստիտուտներ, որպեսզի նրանց մոտ էլ գիտությամբ զբաղվելու ցանկություն առաջանա: «Մանավանդ, որ մենք այսօր տեսանք, թե հայ գիտությունն ինչ առարկայական արդյունքներ է առաջարկում, որից օգտվում են նաև բնակչությունը, արտադրական ձեռնարկությունները: Ունենք բավականին հետաքրքիր աշխատանքներ, որոնք ՁԼՄ-ների շնորհիվ պետք է լավագույնս ներկայացվեն», – ասաց Տիգրան Մարգարյանը:

Անդրադառնալով գիտության ֆինանսավորմանը՝ վարչապետը լրագրողների հետ զրույցում նշեց, որ ԱՄՆ իր այցի ընթացքում պարզվել է, որ Միլիկոնյան հովտի առաջատար ընկերություններն էլ ունեն ֆինանսական խնդիրներ: Կառավարության ղեկավարի խոսքով, անհրաժեշտ է առաջին հերթին ստեղծել գիտության ֆինանսավորման և արտադրության շղթա,

որպեսզի մասնավոր հատվածն էլ մասնակցի գիտության ֆինանսավորմանը: «Ուրախ եմ, որ այսօր մեր ինստիտուտներն այդպիսի ուղղություն են ընտրել, որ ոչ միայն պետությունից ակնկալեն ֆինանսավորում, այլև մասնավոր հատվածից: Արդեն տեսնում ենք, որ այդ փոփոխությունը մեր գիտության մեջ տեղի է ունենում: Մենք տեսանք տարբեր առաջարկներ, որոնք կարող են օգտակար լինել գյուղատնտեսության, շինարարության և այլ ոլորտներում», – նշեց վարչապետը:

Գիտության բնագավառում երկարատև, բեղմնավոր գիտական գործունեության և ՀՀ ԳԱԱ 70-ամյակի կապակցությամբ Տիգրան Սարգսյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Հարություն Մարությանին և ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարան» հրատարակչության գլխավոր խմբագիր-տնօրեն, քիմիական գիտությունների դոկտոր Հովհաննես Այվազյանին պարգևատրեց ՀՀ վարչապետի հուշամեդալով:

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի գիտական ղեկավար, տեխնիկական գիտությունների թեկնածու Տիգրան Զարգարյանը և ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Զավեն Ավետիսյանը խրախուսվեցին ՀՀ վարչապետի շնորհակալագրով:

Հոբելյանի կապակցությամբ ոլորտի ներկայացուցիչներին ուղերձ էր հղել ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, որը ընթերցեց ԱԺ նախագահի տեղակալ Հերմինե Նաղդալյանը. «ԳԱԱ-ն 70 տարեկան է, սակայն գիտական միտքն այնքան հին ու հարուստ պատմություն ունի, որ մեզ իրավունք է վերապահում համարվել համաշխարհային գիտության հիմնավոր սյուներ ստեղծած ժողովուրդներից մեկը: Յուրաքանչյուր երկրի համար պատիվ է ունենալ գիտական հարուստ մտքի այնպիսի շտեմարան, որտեղից կարող է սնուցվել պետության զարգացումը բոլոր բնագավառներում: Այդ շտեմարանի ձևավորման, հարստացման ու ամրապնդման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը բխում է հենց պետության շահերից: Իհարկե, ցավով պետք է նշել, որ մինչ օրս գիտությանը հատկացվող գումարները դեռևս չունեն այն ծավալը, որի անհրաժեշտությունը կա»: Օրենսդիր մարմնի ղեկավարի խոսքերով, չնայած դրան, պարտավոր ենք հաղթանակով դուրս գալ բոլոր իրավիճակներից, քանի որ առաջընթացի գրավականը միայն հաղթանակն է: «Գիտության հաղթանակները պակաս կարևոր չեն: Շատ դեպքերում նույնիսկ ավելի կարևոր են, քան հաղթանակները ռազմի դաշտում: Իր գործունեության 70 տարիների ընթացքում ԳԱԱ-ն՝ որպես հայ գիտական միտքը միավորող կառույց, երբեք դիտորդի դերում չի եղել համազգային ու համապետական խնդիրները լուծելու գործընթացներում: Գիտությունների ազգային ակադեմիա անունը մշտապես յուրօրինակ այցեատմա է եղել մեր երկրի ու ժողովրդի համար, որովհետև այն լոկ շենք չէ, այն հայոց գիտական մտքի երեկը, այսօրը և վաղը է՝ ի դեմս հայ գիտնականների և նրանց գիտական նվաճումների», – ասված էր ԱԺ նախագահի ուղերձում:

Ուղերձի ընթերցումից հետո ԱԺ նախագահի տեղակալ Հերմինե Նաղդալյանը մի խումբ գիտնականների հանձնեց ԱԺ նախագահի պարգևներ:

Ազգային ակադեմիան ազգային հարստություն է ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի համար: «Հավատում ենք, որ այն ունի ոչ միայն անցյալ, ունի նաև ապագա: Հուրախություն բոլորիս՝ կառավարության կողմից տարվող քաղաքականության շրջանակներում ԳԱԱ-ի հետագա զարգացման համար ստեղծվել են և իրավական, և ֆինանսական նոր հնարավորություններ: ԳԱԱ-ն իր գործունեության ողջ ընթացում եղել է մեր ժողովրդի գիտական ժառանգության պահպանման և զարգացման գործի երաշխավորը», – ասաց նախարարը՝ ցանկանալով ակադեմիային, հավատարիմ մնալով ավանդույթներին, շարունակել իր ազգանվեր աշխատանքը, հասնել գիտական նվաճումների աննախադեպ բարձունքի՝ ի շահ մեր պետության և ազգային նպատակների իրականացման:

Այլա ՀՀ ԿԳ նախարարը պատվոգրեր հանձնեց մի խումբ գիտնականների:

«Ես կարծում եմ, որ Հայաստանը պարտավորություն և իրավունք ունի հպարտանալու իր ակադեմիայով, որովհետև սա այն ակադեմիան է, որն ունի այնպիսի հոյակապ անուններ, որոնք լուսավորում են պատմությունը», – ասաց Էրմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոտրովսկին:

ՀՀ ԱԺ հուշամեդալի արժանացած կենսաբանական գիտությունների դոկտոր Աննա Բոյաջյանի խոսքերով, չնայած ծանր պայմաններին, գիտության ոլորտում բավականին առաջադիմել ենք: Որպես դրա ապացույց առաջարկում է ծանոթանալ գիտնականների կողմից տպագրված հոդվածներին, կիրառական արդյունքներին: Ասում է, որ կկարողանային ավելի արդյունավետ աշխատել, եթե ֆինանսավորումն ավելանար:

ՀՀ ՊՆ մեդալով պարգևատրված ԳԱԱ թղթակից անդամ Լևոն Թավադյանն էլ ասում է, որ գիտությունը ոլորտ է, որը պետք է նորմալ կենսագործի, որ արդյունքներ տա: 70 տարիների ընթացքում կատարված մի շարք ձեռքբերումներ է նշում: Ինքն էլ հայտնագործության հեղինակ է: Դրան սովել է «Շղթայական ռեակցիաների ընտրողական արգելակում» անվանումը:

«Ակադեմիայի 70 տարվա գործունեության ամենակարևոր արդյունքը այն է, որ մեր ժողովրդի պատմության հազարամյակների ընթացքում ինտելեկտուալ ներդրումը մարդկային քաղաքակրթության բնագավառում կարծես թե սկսեց ճանաչվել որպես համաշխարհային գիտության մի բաղկացուցիչ մաս: Իսկ արևելագիտությունը այնպիսի գիտություն է, որը պահանջում է մեր հետազոտությունները մեր հարևանների վերաբերյալ այնպիսի մակարդակով կատարվեն, որ դրանք հասկանալի և ընդունելի լինեն մեր մասնագիտության այլ երկրների ներկայացուցիչների շրջանում: Այդ առումով կարևորում էմ թուրքագիտական հետազոտությունները, որովհետև մենք լավ հասկանում ենք ժամանակակից Թուրքիան: Ես կարևորում եմ, որ մեր աշխատանքները թարգմանվեն օտար լեզուներով, որպեսզի մեր մոտեցումները ծանոթ լինեն նաև այլ երկրների ներկայացուցիչների», – ընդգծեց ԱԺ պատվոգրի արժանացած ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը:

* * *

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 16-ին ընդունել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 70-ամյակի տոնակատարությունների շրջանակում Երևան ժամանած ավելի քան մեկ տասնյակ երկրների գիտությունների ակադեմիաների նախագահներին, հայտնում են ՀՀ նախագահի մամլո գրասենյակից:

Հանրապետության նախագահը ողջունել է անվանի գիտնականներին Հայաստանում, շնորհակալություն հայտնել ՀՀ ԳԱԱ հիմնադրման հորեյանական միջոցառումներին նրանց մասնակցության համար: Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել 70-ամյա փառավոր ուղի անցած Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի գործունեությունը, ընդգծելով, որ տասնամյակներ շարունակ մեր գիտնականներն իրենց մեծ ներդրումն են ունեցել գիտության և Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Սերժ Սարգսյանը հույս է հայտնել, որ ՀՀ ԳԱԱ գիտնականները նույնպիսի նվիրումով կշարունակեն իրենց կարևորագույն աշխատանքը՝ տարեցտարի ակադեմիայի գիտնականների շարքերը համալրելով երիտասարդներով, առանց որոնց, նախագահի համոզմամբ, գիտության զարգացումը հեռանկար ունենալ չի կարող: Ակադեմիայի առկա ձեռքբերումները հանրապետության նախագահը պայմանավորել է նաև միջազգային ակտիվ համագործակցությամբ: Նրա խոսքով, ցանկացած երկրի համար դժվար է պատկերացնել արդի պահանջներին համապատասխան գիտության զարգացումն առանց այդ փոխգործակցության: Նախագահը կարևորել է ինչպես երկկողմ ձևաչափում, այնպես էլ միջազգային ծրագրերի և տարբեր կազմակերպությունների շրջանակներում համագործակցությունը, որի լավագույն օրինակներից մեկն էլ չորս տասնյակ երկիր միավորող Գիտությունների համաեվրոպական ազգային ակադեմիաների ֆեդերացիան է, որի անդամ է նաև Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան:

Հանդիպմանը ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը շնորհակալություն է հայտնել հանրապետության նախագահին՝ ակադեմիան մշտապես պետական ուշադրության ներքո պահելու, գիտնականներին և հատկապես երիտասարդ գիտնականներին աջակցություն ցուցաբերելու, խրախուսելու համար:

Հանդիպմանը ներկա երկրների ակադեմիաների նախագահները հանրապետության նախագահի հետ զրուցել են գիտության արդի մարտահրավերների, դրանց դիմակայելու հնարավորությունների և գիտության զարգացման հեռանկարների մասին: Նրանք ևս կարևորել են ակադեմիաների ակտիվ համագործակցությունը, միաժամանակ բարձր գնահատելով Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հետ տարիներ ի վեր գոյություն ունեցող իրենց արդյունավետ համագործակցությունը: Գիտնականները դրվատանքով են խոսել նաև պետության կողմից Հայաստանի ակադեմիայի նկատմամբ ցուցաբերվող հոգածության, գիտնականների աշխատանքը գնահատելու և Հայաստանի գիտության զարգացմանն ուղղված ջանքերին աջակցելու մասին:

Հանդիպման ավարտին Սերժ Սարգսյանն անվանի գիտնականներին հրավիրել է մասնակցելու և իրենց ներկայությամբ պատվելու նախագահի նստավայրում հանդիպումից անմիջապես հետո անցկացվելիք տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ՀՀ նախագահի 2013 թ. կրթական պարզնների հանձնման հանդիսավոր արարողությունը, շփվելու հայ տաղանդաշատ աշակերտների և ուսանողների հետ, խրախուսելու նրանց: Գիտնականները սիրով ընդունել են նախագահի հրավերը՝ մասնակցելով միջոցառմանը:

«Գիտություն», հոկտեմբեր, № 10, 2013 թ.

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրերով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակի կապակցությամբ, գիտության և կրթության բնագավառում ունեցած մեծ վաստակի համար Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումներ են շնորհվել.

Գիտության վաստակավոր գործչի՝

Համլետ Ամբակումի ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տեսական փիլիսոփայության բաժնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Մառլենա Ժիրայրի ՀՈՎԱԿԻՍՅԱՆԻՆ՝ ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի լաբորատորիայի խմբի ղեկավար, քիմիական գիտությունների դոկտոր

Սերգեյ Հովհաննեսի ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Աշոտ Սերոբի ՍԱՂՅԱՆԻՆ՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Արվեստի վաստակավոր գործչի՝

Աննա Գրիգորի ԱՍՍՏՐՅԱՆԻՆ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակի կապակցությամբ, գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար պարգևատրվել են.

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով՝

Նորայր Հունանի ԱՌԱՔԵԼՅԱՆԸ՝ ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

Անանիա Շիրակացու մեդալով՝

Արսեն Ալեքսանդրի ՀԱԽՈՒՄՅԱՆԸ՝ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու